

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՉԱԺՈՂՈՎ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2014 թվականի գործնական պլանի կատարման մասին գեկույց

Մարտ, 2015 թվական

ზაგორენის სამინისტროს მიერ გეგმის შესრულების ანგარიში

ზოგადი მიზანი: მოვალეობის და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

ზოგადი მიზანი: მოვალეობის და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

ზოგადი მიზანი: მოვალეობის და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

ზოგადი მიზანი: მოვალეობის და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Ներածություն..... | 4 |
| Ուսումնական ուղղությունների շրջանակներում իրականացված գործունեություն. | |
| I. Օրենքի գերակայություն | 6 |
| II. Կրթություն և պետական լեզու | 9 |
| III.Մեղիս և տեղեկատվության մատչելիություն..... | 18 |
| IV. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն..... | 20 |
| V. Սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում | 24 |
| VI. Մշակույթի և ինքնազոյի պահպանում | 26 |
| VII.Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի իրականացրած գործունեությունը..... | 29 |

Ներածություն

Ազգային փոքրամասնությունների և սամոქյալայտ օճառագրագույն շաբաթական գործառքունների մասին ՀՀ օրենքը պահանջական է և պահապահական ինտեգրման ազգային հայեցակարգը և 2009-2014 թվականների Գործնական պլանն է: Այս փաստաթուղթը հաստատվեց Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի թիվ 348 կարգադրությամբ: Վերինտեղին հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմին¹ հանձնարարվեց ազգային փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականության մշակում, համակարգում և հաշվետվություն: Այս գործընթացները համակարգված վարելու նպատակով Վերինտեղին հարցերով պետական նախարարի 2009 թվականի հուլիսի 3-ի թիվ 14 հրամանի հիման վրա ստեղծվեց Պետական միջզերատեսչական հանձնաժողով:

Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են ինչպես Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությունը և պատասխանատու աշխատակիցները, այնպես էլ պետական հիմնարկությունների, նախարարությունների և կազմակերպությունների, Թբիլիսիի Սակրեբուլոյի և ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների երեք մարզային վարչությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի աշխատանքում ընդգրկված են հետևյալ գերատեսչությունները.

- Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը,
- Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը,
- Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարությունը,
- Վրաստանի տարածաշրջանային գարգացման և ենթակառույցի նախարարությունը,
- Վրաստանի արդարադատության նախարարությունը,
- Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը,
- Վրաստանի սպորտի և երիտասարդության գործերի նախարարությունը,
- Վրաստանի ներքին գործերի նախարարությունը,

¹ Վրաստանի կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 362 Որոշմամբ Վերինտեղին հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի անվանումը փոխվեց և այն կոչվեց Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ, փոփոխությունը գործարկվեց 2014 թվականի հունվարի 1-ից:

- Սույն գեկույցը արտացոլում է 2014 թվականի Գործնական պլանով նախատեսված վեց ռազմավարական ուղղությամբ՝ օրենքի գերակայության, կրթության և պետական լեզվի, մեղիայի և տեղեկատվության մատչելիության, քաղաքական ինտեգրման և քաղաքացիական մասնակցության, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրման, մշակույթի և ինքնագոյի պահպանման, Վրաստանի իշխանության կողմից իրականացված միջոցառումները։ Հաշվետու ժամանակամիջոցի ընթացքում Գործնական պլանի իրականացմանը մասնակցություն չեն ունենում նախագահի վարչությունը, Ազգային Անվտանգության խորհուրդը և Թբիլիսի Սակրեբուլոն։

2014 թվականին լրացավ «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների Գործնական պլանի» ժամկետը և Պետական նախարարի աշխատակազմը սկսեց աշխատանքը նոր ռազմավարության և հետագա տարիների Գործնական պլանի մշակման վրա։ Այս նպատակով Պետական նախարարի աշխատակազմը և անկախ փորձագետների խումբը միասնաբար պատրաստեցին Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների Գործնական պլանի կատարման գնահատման փաստաթուղթ։ Այս փաստաթուղթում արտացոլվեցին այն դրական և բացասական միտումները, որոնք նկատվում էին հայեցակարգը իրականացնելիս, մշակվեցին նաև հանձնարարականներ։ Նոր ռազմավարությունում և Գործնական պլանում կարտացոլվեն բոլոր դրական արդյունքները, իսկ բացահայտված բացթողումները և թերությունները ի նկատի կառնվեն։

Հաշվետու ժամանակաշրջանում, պլանավորված միջոցառումների իրականացման գործում Պետական նախարարի աշխատակազմին ակտիվորեն աջակցում էր Վրաստանի ՄԱԿ-ի

ასოციაციან (UN Association of Georgia) «Ազգային ինსტედიტუტ ინსტიტუტ Վրასთანი» ნაխագծի გრძანაկნერის, ირნ իրაկანაցվուმ է ԱՄՆ-ի միջազգային კარგացմან գორծაկალოւթյան (USAID) ֆինանսական աջակցությամբ:

I. Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայության ուղղությամբ գործունեությունն իրականացնում են Վրաստանի արդարադատության և ներքին գործերի նախարարությունները, ինչպես նաև ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների մարզային վարչությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվեցին տարբեր տեսակի միջոցառումներ, որոնք ուղղված էին առաջադրված խնդիրների կատարմանը, այդ թվում. խորհրդարանն ընդունեց ամեն ձևի խորականություն արմատախիլ անելու մասին օրենսդրություն, ինչպես նաև հաստատեց մարդու իրավունքների ռազմավարությունը և Գործնական պլանը, որի նշանակալից մասը տրամադրված է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերին:

Գնչուների հաշվառք

Վրաստանի Արդարադատության նախարարության պետական սերվիսների կարգացման գործակալությունը «Նորարարությունների և բարեփոխումների կենտրոն» ոչկառավարական կազմակերպության հետ համագործակցությամբ շարունակեց գնչուների հաշվառքի գործընթացը: 2014 թվականի վիճակագրական տվյալները այսպես են արտահայտվում.

| Գործավարության կատեգորիա | Ընդհանուր գումար | Գործավարությունն ավարտվեց | Գործավարությունն ընթացքի մեջ է |
|--|---------------------|------------------------------|-----------------------------------|
| Քաղաքացիության հաստատում | 13 | 13 | 0 |
| Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ | 12 | 12 | 0 |
| Ծննդյան փաստ | 36 | 36 | 0 |
| Ընդհանուր գումար | 61 | 61 | 0 |

Թրեքիկինգի դեմ պայքարի հարցերի մասին ազգային փոքրամասնությունների գիտակցության բարձրացում

2014 թվականի ընթացքում Վրաստանի Արդարադատության նախարարությունը մարդու վաճառքի (թրեքիկինգի) դեմ պայքարի միջզերատեսչական համակարգող խորհրդի, միզրացիայի միջազգային կազմակերպության և «Միզրացիայի կենտրոն» ոչկառավարական կազմակերպության հետ սերտ համագործակցությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում տեղեկատվական հանդիպումներ անցկացրեց մարդու վաճառքի, անօրեն միզրացիայի վտանգների և դրանցից պաշտպանվելու միջոցների մասին:

Այսպիսի ինք տեղեկատվական հանդիպում անցկացվեց Մարտենիում, Բորջոմիում, Ախալցիխեում, Ախալքալաքում, Նինոծմինդայում, Գարդաբանում, Ծալկայում և Սարթիձալայում: Ընդհանուր առմամբ, հանդիպումներին մասնակցեցին ազգային փոքրամասնությունների 268 ներկայացուցիչներ:

Հաշվետու ժամանակաշրջանում, ներքին գործերի նախարարության ակադեմիան ակտիվություն իրականացնում էր ազգային փոքրամասնությունների իրավահավասարության պահպանության քաղաքականություն: Այս տեսանկյունից անցկացվեցին հետևյալ միջոցառումները.

- Ակադեմիայում գոյություն ունեցող ծրագրերում համապատասխան փոփոխություններ մտցվեցին և ավելացան «Խորականության բոլոր ձևերը արմատախիլ անելու մասին» և «Անձնական տվյալներ» ուսումնական դասընթացներ, որոնց շրջանակներում վերապատրաստվեցին Վրաստանի ներքին գործերի նախարարության գործող և ապագա աշխատակիցները,
- Ակադեմիայի ոստիկանական կարգավորման իրավական մագիստրային ծրագրին ավելացավ այնպիսի հարցերի դասավանդում, ինչպիսիք են «Խորականության բոլոր ձևերի անթույլատրելիություն» և ոստիկանության առանձնահատուկ դերը խորականության բոլոր ձևերի դեմ պայքարում»,
- Դասավանդման գործընթացում նշանակալից ուշադրություն հատկացվեց մարդկանց իրավահավասարության խախտման և ուսասայական խորականության, խորականության անթույլատրելիության հարցերի ուսուցմանը: Թաղային տեսուչների, ինչպես նաև պարեկային և սահմանապահ ոստիկանության պատրաստության և վերապատրաստության հատուկ կրթական ծրագրերը ընդգրկում են ուսումնական դասընթաց «Ոստիկանությունը բազմազգ հասարակությունում» վերնագրով:

2014 թվականի հուլիսին Ներքին գործերի նախարարության և Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի միջև ձևակերպված Պայմանագրի շրջանակներում, ակադեմիայի ունկնդիրների համար անցկացվեց սեմինար, որը նվիրվեց սահմանափակ կարողություններով անձանց իրավունքների պաշտպանության հարցերին:

Ազգային փոքրամասնություններով բնակեցված (Սամցիսէ-Զավախեթի, Քվեմո Քարթի, Կախեթի տարածաշրջանների) մարզային վարչությունների կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում, Սամցիսէ-Զավախեթի մարզային վարչությունում և տարածաշրջանի մունիցիպալիտետներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դիմումներին արձագանքումը տեղի էր ունենում օրենքով սահմանված ընթացակարգերի պաշտպանությամբ:

Փոքրամասնությունների ներկայացուցիչներին պատշաճ բանավոր բացատրություններ տրվում էին մայրենի կամ նրանց հասկանալի լեզուներով:

2014 թվականին Սամցիսէ-Զավախեթում նահանգապետի վարչության տարբեր կարիքների մասին դիմում ներկայացրեց ազգային փոքրամասնությունների 57 ներկայացուցիչ: Դիմումները, հիմնականում կապված էին սոցիալական օգնության խնդրին:

Հաշվետու ժամանակաշրջանում, Սամցիսէ-Զավախեթի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության Գործնական պլանի մշակման վրա ընթանում է ակտիվ աշխատանք: Այս նպատակով ստեղծվեց հինգ աշխատանքային խումբ, որոնց գործունեությունում նույնպես ընդգրկված էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Քվեմո Քարթիի տարածաշրջանի Դմանիսի, Թեթրիծղարոյի, Գարդաբանի և Ծալկայի մունիցիպալիտետներում տեղական իշխանության ներկայացուցիչները բնակչության հետ պարբերաբար վարում են տեղեկատվական հանդիպումներ օրենսդրական նորությունների, մասնավորապես, նոր հակախտրականության կարգավորումների հետ նրանց ծանոթացնելու նպատակով:

II. Կրթություն և պետական լեզու

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և նրա ենթակայության ներքո գտնվող հանրային իրավունքի իրավաբանական անձիք (ՀԻՒ) շարունակեցին տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը հաշվետու ժամանակաշրջանում:

Լեզվական կրթություն՝ որակյալ կրթություն

Վրաստանի կրթության և գիտության նախարարության ազգային ուսումնական պլանների դեպարտամենտը մշակեց «Լեզվական կրթություն՝ որակյալ կրթություն» ենթածրագիրը, որի նպատակը լեզվական կրթության մակարդակի բարձրացման համար մատչելի պայմանների ստեղծումն է ինչպես վրացալեզու, այնպես էլ ոչվրացալեզու դպրոցներում:

Ազգային փոքրամասնությունների լեզվական կրթության բարելավման համար այս ծրագրի շրջանակներում անցկացվեցին հետևյալ միջոցառումները.

- Ստեղծվեցին ինչպես մեծաքանակ, այնպես էլ փոքրաքանակ փոքրամասնությունների լեզուների ուսուցման հարցի վրա կենտրոնացած խմբեր (այս խմբերի մեջ մտնում էին. Ազգային փոքրամասնություններին պատկանող աշակերտների ծնողները, մայրենի լեզվի ուսուցիչներ, ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ), հետազոտության թեման վերաբերում էր մայրենի լեզուները սովորել-սովորեցնելու հարցերին, իսկ նպատակն էր մայրենի, պետական և օտար լեզուները սովորել-սովորեցնելու հարցերով հետաքրքրվող խմբերի կարծիքների բացահայտումը և այս դիրքորոշումների հաշվառումը մայրենի լեզվով ուսուցման-ուսումնառության մոդելներ մշակելիս,
- Ստեղծվեց խորհրդատվական խորհուրդ փոքրամասնությունների լեզվական կրթությունը բարելավելու համար լեզուների ուսուցման-ուսումնառության հայեցակարգի մշակման և մայրենի լեզուների կապակցությամբ ազգային ուսումնական պլանում մտցվելիք փոփոխությունների վերջնական փաթեթի պատրաստման նպատակով: Այս փաթեթը ներկայացվեց որոշումներ ընդունող սուբյեկտներին:

Մայրենի լեզուներով կրթության կապակցությամբ որոշվեց իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Ոչվրացալեզու միջնակարգ կրթության հիմնարկությունների համար ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուների (աղբեցաներենի, հայերենի և ռուսերենի)

չափորոշիչների և համապատասխան ծրագրերի մշակում: Այս լեզուներում ազգային չափորոշիչների և ծրագրերի առաջարկը ապահովում է մայրենի լեզուներով որակյալ կրթությանը օժանդակող այնպիսի տարրեր սերվիսների գործարկում, ինչպիսիք են. փոքրամասնությունների մայրենի լեզուների դասագրքերի մշակում և գրիֆացում, ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուների ուսուցիչների նախապատրաստական համալսարանական ծրագրերի մշակում, այս առարկաների ուսուցիչների արհեստավարժության չափորոշիչների ստեղծում, գործող ուսուցիչների արհեստավարժության զարգացմանը նպաստող վարժանքային-կրթական ծրագրերի մշակում և իրականացում, սերտիֆիկացման մեխանիզմի գործարկում և այլն:

- Վրացալեզու միջնակարգ կրթության հիմնարկությունների համար սակավաթիվ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուների չափորոշիչ և առարկայական ծրագրերի մշակում: Այս լեզուների թվին են պատկանում. չեզեներեն-քիստերենը, ասորերենը, քուրմանցին, խունձուրին, ուդուերենը, օսերենը, հունարենը:

Քիլինգային կրթություն

Վրաստանի կրթության և գիտության նախարարության ազգային ուսումնական պլանների դեպարտամենտը 2014 թվականի դեկտեմբերին ավարտեց ոչվրացալեզու դպրոցների 7-րդ դասարանի համար կիրառական արվեստի և կենսաբանության երկլեզու դասեր վարելու ռեսուրսների առաջին տարրերակի մշակումը: Բովանդակությամբ այս ռեսուրսները հենվում են ազգային ուսումնական պլանի չափորոշիչների և գրիֆ ստացած դասագրքերի վրա, իսկ մեթոդոլոգիայով՝ երկլեզու կրթության (լեզվի և առարկայի ինտեգրված ուսումնառություն), ժամանակակից տեխնոլոգիաների վրա: Այս տեսակետից, սա նոր փուլ է, նորարարական բնույթի կրթական ռեսուրս:

Ծրագիր «Սովորեցնենք վրացերենը որպես երկրորդ մայրենի»

«Սովորեցնենք վրացերենը, որպես երկրորդ մայրենի» ծրագիրը, որը հետապնդում է վրաց լեզվի դասավանդման օժանդակություն և վրաց լեզվի ուսուցիչների մասնագիտական զարգացման նպատակ, իրականացվում է Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ծալկայի, Բոլնիսի, Դմանիսի, Գարդաբանի, Մառնեուլի և Սագարեցոյի մունիցիպալիտետների ոչվրացալեզու դպրոցներում:

Նոր ընտրված մարզիչ-ուսուցիչները նապատրաստություն են անցնում «Վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցման մեթոդիկայից» (50 ժամ), «Ազգային և կրոնական հանդուժողականությունից» (5 ժամ), ինչպես նաև աղբբեշաներեն կամ հայերեն լեզվի

შემწყნარებლობისა და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

7 ქულა 129 – 7 միավոր 129

8 ქულა 144 – 8 მիავორ 144

9 ქულა 170 – 9 მիავორ 170

10 ქულა 44 – 10 მիავორ

მოსწავლეებია რაოდენობა - Աշակերտների թվաքանակ



Հարցում լավ

Սամանադրությունը պահպանության մեջ մտնելու համար պահանջվող գործությունների համար համապատասխան համարները

Հարցում չլավ

Ըստ համարների պահանջման դուրս գործությունների համար համապատասխան համարները

| 2011 | 2014 |
|-----------------|-----------------|
| 3ერ გადალახა 9% | 3ერ გადალახა 4% |
| 6 ქულა 27% | 6 ქულა 18% |
| 7 ქულა 19% | 7 ქულა 21% |
| 8 ქულა 20% | 8 ქულა 23% |
| 9 ქულა 13% | 9 ქულა 27% |
| 10 ქულა 12% | 10 ქულა 7% |

2011 წლის მონაცემებთან შედარება

ვერ გადალახა - ვერ ხალხა არ ხდეს

ქულა - მეტავრცელებელი

2011 წლის მონაცემებთან შედარება - პასუხისმგებელის 2011 წლის მონაცემების შედეგები

| 2011 | 2014 |
|-----------------|-----------------|
| ვერ გადალახა 9% | ვერ გადალახა 4% |
| საშუალო 46% | საშუალო 39% |
| მაღალი 45% | მაღალი 57% |

საერთო სურათი

ვერ გადალახა - ვერ ხალხა არ ხდეს

Տաղավար - Սիշին

Ժամանակաշրջան - 2014 թվական

Տարրական պահանջման մասին օրենքը՝ ՀՀ օրենսդրության մեջ ընդունված է 2014 թվականի մայիսի 28-ին:

Վրաց լեզվի ակումբ

Ծրագրին մասնակցող ուսուցիչները դպրոցներում վրաց լեզվի ուսուցմանը զուգահեռ, անց են կացնում վարժանքներ ուսուցիչների համար, կազմակերպում են տարբեր արտադասարանական միջոցառումներ (ամանորյա, ամառային, աշնանային հանդեսներ, բանաստեղծներին և գրողներին նվիրված օրեր, կրոնական/ազգային տոնահանդեսներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, ներկայացումներ և այլն):

Նոր մանկավարժի ժամանումից հետո գյուղում ստեղծվում է լեզու սովորողների խումբ՝ «Վրաց լեզվի ակումբ»: «Վրաց լեզվի ակումբ» կարող են հաճախել դիմորդները, ուսուցիչները, աշակերտները, ծնողները և համայնքի այլ ներկայացուցիչներ: Ծրագրին ընդգրկված ուսուցչի պարտականությունն է, որ վարժանքներ անցկացնի վրաց լեզվի տեղական ուսուցիչներին, հոգա նրանց մասնագիտական զարգացման մասին և ծանոթացնի կրթության համակարգում տարածված նորույթներին:

Ակումբներ սարքավորելու և ուսումնական գործընթացը արդյունավետ վարելու համար ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը ծրագրին ընդգրկված դպրոցներին փոխանցում է անհրաժեշտ գույք, առողջութեա սարքավորանք, ուսումնական-դիտողական և դիդակտիկ նյութեր:

2014 թվականի հոկտեմբեր ամսվա տվյալներով, «Սովորեցնենք վրացերենը, որպես երկրորդ լեզու» ծրագրի շրջանակներում ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների 90 դպրոցի «Վրաց լեզվի ակումբներում» հաշվում էր 3 545 ունկնդիր, այստեղից.

| | |
|----------------------|-------------|
| Աշակերտ | 2625 |
| Ուսուցիչ | |
| • Վրաց լեզվի | 220 |
| • Այլ առարկայի | 264 |
| Ընդամենը. | 484 |
| Համայնքի | 436 |
| ներկայացուցիչ | |

Фонхиаванакмаван և բարեկամության նախագծեր

2014 թվականին «Սովորեցնենք վրացերենը, որպես երկրորդ լայրենի» ծրագրի մասնակիցների 65%-ը պահանջում է (5% - 2011 թվականին) և իրականացրեց փոխանակման ծրագրեր: Հայկական և աղբբեջանական դպրոցները բարեկամացան տարբեր տարածաշրջանների վրացական դպրոցների հետ:

Մարզիչ-ուսուցիչները որոնեցին գործընկեր դպրոցներ Վրաստանի տարբեր քաղաքներում (Թբիլիսի, Գուրջաանի, Գորի, Գարդաբանի, Սագարեցո, Զեստափոնի, Խաշուրի, Չաքվի և այլն) և կազմակերպեցին այնպիսի փոխանակման միջոցառումներ, ինչպիսիք են միմյանց հյուրընկալությունը և բնակությունը մեկ շաբաթվա ընթացքում, դասերին ներկայությունը, միասնական համերգ/բեմադրություն, տարբեր կերակրատեսակների ծանոթացում, Վրաց Ուղղափառ, Հայ Առաքելական Եկեղեցիների, մզկիթների և այլ մշակութային հուշարձանների դիտում:

Նախագիծ «Վրաց լեզուն ապագայի հաջողության համար»

Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնը «Վրաց լեզուն ապագայի հաջողության համար» ծրագրի նպատակներին հասնելու համար 2014 թվականին առանձնացրեց երկու հիմնական ուղղություններ. մանկավարժների գործուղում ոչվրացալեզու դպրոցներ և ուսումնական ռեսուրսների ստեղծում:

Ծրագրի շրջանակներում, 2014 թվականի ընթացքում ոչվրացալեզու դպրոցներ օժանդակ ուսուցիչների գործուղում իրականացվեց երկու փուլով.

1. 2013 թվականի վերջին մրցույթի արդյունքում ընտրվեց 23 մասնակից, ովքեր 2014 թվականի հունվարին մասնագիտական ունակություններից և վրաց լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդներից անցան ինտենսիվ վարժանք: Նախապատրաստություն անցնելուց հետո ընտրված մանկավարժները բաշխվեցին Սամցխե-Զավախիեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցներին:
2. 2014 թվականի հունիսին ծրագրի շրջանակներում հայտարարվեց մրցույթ, որի շրջանակներում ընտրվեց 81 մասնակից, այստեղից.
 - 53 – վրաց լեզվի օժանդակ մանկավարժ,
 - 17 – պատմության մանկավարժ,
 - 11 – աշխարհագրության մանկավարժ:

Մինչև տարածავრგაն ուղևորվելը բոլոր մասնակիցներն անցան վարժանք հետևյալ մոդուլներից.

- Դասարանը վարելու մասնագիտական ունակություններ,
- Վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցման մեթոդովիա/լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում,
- Ինկյուզիվ ուսուցում:

2014 թվականի դեկտեմբերի դրությամբ, ծրագրին ընդգրկված էր 210 օժանդակ մանկավարժ: Տարածաշրջաններում ծրագրի մասնակցության հիմնական գործունեությունը ներկայացնում է.

- Համապատասխան առարկայի տեղական մանկավարժին օգնություն - դասի պլանավորում և վարում,
- Արտադասարանական ակտիվությունների իրականացում,
- Վրաց լեզվի/պատմության և աշխարհագրության խմբակների/ակումբների կազմավորում,
- Հյուրընկալող ընտանիքին վրաց լեզվի ուսուցում:

Ոչվրացալեզու աշակերտների ապենովում վրաց լեզվի ուսումնական նյութերով

2011-2014 թվականներին «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի շրջանակներում ստեղծվեցին տարրական, բազային և միջնակարգ աստիճանի I-XII մակարդակի վրաց լեզվի դասագրքեր ոչվրացալեզու աշակերտների համար, կազմվեց հեղինակների խումբ, որը պատրաստեց ժամանակակից չափորոշիչներին համապատասխան դասագրքեր: Գործընթացին ընդգրկված էին խմբագիրներ, դիզայն-շարվածքը բաժանողներ և նկարիչներ: Դասագրքի հավաքածուն կազմված է աշակերտի դասագրքից, աշակերտական տետրից, ուսուցչի դասագրքից և առողին երիզից:

2014 թվականին ծրագրի շրջանակներում ստեղծված I-XII մակարդակի վրաց լեզվի դասագրքերը ոչվրացալեզու դպրոցներին փոխանցվեց նրանց դիմում-խնդրանքի հիման վրա:

Վրաց լեզվի անվճար հեկտրոնային ուսուցման նախագիծ

Սպորտի և երիտասարդության նախարարության նախաձեռնությամբ և Ճանաչողական ինտերնետպորտալ www.teach.ge-ի հետ սերտ համագործակցությամբ իրականացվեց վրաց լեզվի անվճար հեկտրոնային ուսուցման նախագիծ: Վրաց լեզուն սովորելու գործընթացը

պարզաբանելու նպատակով կայք-էջում տեղադրվեց հատուկ ուսումնական մոդել Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար, ինչպես նաև բեռնվեցին ուսուերեն-վրացերեն և ադրբեջաներեն-վրացերեն ուսումնական օնլայն-դասեր, որոնցից միանգամայն անվճար կարող է օգտվել յուրաքանչյուր ցանկացող, կայք-էջում գրանցում անցնելուց հետո:

Ազգային ուսումնական օլիմպիադա

2013-2014 ուսումնական տարում ազգային ուսումնական օլիմպիադա անցկացվեց Վրաստանի բոլոր հանրային ուսումնական հիմնարկություններում, այդ թվում նաև ոչվրացալեզու դպրոցներում: Նշված դպրոցներում ազգային ուսումնական օլիմպիադան անցկացվեց հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով, ոչվրացալեզու աշակերտները մասնակցեցին նաև վրաց լեզվի օլիմպիադային:

| | |
|---------------------------------|-------|
| Վրաց լեզու | 1 572 |
| Ոչվրացալեզու դպրոցներ) | |
| Առարկաներ (ադրբեջաներեն լեզվով) | 1 146 |
| Առարկաներ (հայերեն լեզվով) | 1 415 |
| Առարկաներ (ռուսերեն լեզվով) | 757 |

Բացահայտվեցին երրորդ փուլի հիման վրա հաղթած աշակերտները, այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, մասնավորապես, վրաց լեզվից հաղթողների շրջանում երեք հայալեզու և մեկ ադրբեջանալեզու աշակերտ էր:

Դպրոցական ավարտական քննություններ

2013-2014 ուսումնական տարվա դպրոցական ավարտական քննությունների հիման վրա լրիվ միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթուղթ ստացան.

Հայալեզու աշակերտ – 615

Ադրբեջանալեզու աշակերտ – 492

Ռուսալեզու աշակերտ - 743

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում

2014 թվականի Համազգային քննությունների „4+1“ ծրագրի շրջանակներում, ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա,

Վրաստანի բაրձրაգույն იუსტიციური სამინისტროს კონცენტრირებული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

- Ընդհაնուր იუსტიციური სამინისტროს კონცენტრირებული კონცეფციის შესრულების ანგარიში – 456 თემი;
- Ընդհაնოւრ იუსტიციური სამინისტროს კონცენტრირებული კონცეფციის შესრულების ანგარიში – 217 თემი;

Պետական იუსტიციურ სამინისტრო 2014 թվականի Համազգային քննություններին միայն ընդհանուր იუսტიციურ სამინისტრო աղքատացանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա ֆինանսավորվեցին.

- Ընդհանուր იუսტიციურ სამინისტრო աղքատացանալեզու թեստի հիման վրա – 96 თემი;
- Ընդհանուր იუսტიციურ սամայի հայալեզու թեստի հիման վրա - 89 თემ:

Ակադեմիական ծրագրերից, նրանցից, ով հայերեն լեզվով հանձնեց ընդհանուր ունակությունները, 1 դիմորդ ընդունվեց, իսկ նրանցից, ով աղքատացաներեն լեզվով հանձնեց այս քննությունը, 12 դիմորդ, այդ թվում մեկը ստացավ 50%-անոց դրամաշնորհ:Մեկ դիմորդ հանձնեց աբխազերեն լեզվի և գրականության թեստ:

Արդեն երկու տարի է, ինչ Սպորտի և երիտասարդության գործերով նախարարությունը անց է կացնում արագ տպման և տրամաբանական մտածողության մրցույթ: Վրաց լեզվի գրության և լեզվի ժողովրդականացման նպատակով ստեղծվեց կայք-էջ (www.ka.msy.ge), որտեղ դպրոցական հասակի երիտասարդներին հնարավորություն տրվեց ընդգրկվել արագ տպագրության մարաթոնին: Հաղթողները պարգևատրվում էին դիպլոմներով և նվերներով:

III. Մեղիա և տեղեկատվության մատչելիություն

Հանրային հաղորդում

Հաշվետու ժամանակաշրջանում, հանրային հաղորդումը շարունակում էր իրականացնել Գործնական պլանով նախատեսված միջոցառումները: Հանրային հաղորդման 2-րդ ալիքով ամենօրյա ռեժիմով, ուղիղ եթերում հաղորդվում էր «Ազգային մոամբ» փոքրամասնությունների 5 լեզվով (աբխազերեն, օսերեն, հայերեն, աղքատացաներեն, ռուսերեն):

2014 թվականի հոկտեմբերից սկսած ամեն օր, բացի շաբաթ-կիրակի օրերից, 23:00 ժամին, 2-րդ ալիքի եթերում հաղորդվում է ռուսերեն «Իսկական ժամանակ»

հեռուստահաղորդումը,, որը հազեցնում է 2-րդ ալիքի ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների խումբը: Լրատվական-վերլուծական «Խսկական ժան» («Настоящее время») հաղորդումը ներկայացնում է Եվրոպա/ռադիո «Ազատություն» - «Ազատություն» ռադիոյի և «Ամերիկայի ձայն» ռադիոյի միասնական նախագիծը, որը իրականացվում է Վրաստանում, Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում, Մոլդովայում և Ուկրաինայում գործող հանրային և մասնավոր հաղորդումների հետ համագործակցությամբ: Նշված հաղորդումը հիմնված է անկողմնակալության սկզբունքի վրա և լսարանին առաջարկում է աշխարհում ընթացող քաղաքական գործընթացների հետաքրքիր վերլուծություն:

2014 թվականի նոյեմբերի 16-ին, հանդուրժողականության միջազգային օրը, ժողովրդական պաշտպանի գրասենյակը, ազգային փոքրամասնությունների խորհրդի որոշմամբ, 2-րդ ալիքի «Մոամբե» ծրագիրը պարզաբանեց տարվա «Հանդուրժողականության նախանձախնդիր» պատվողությունը:

Շաղիոհաղորդում

2014 թվականին շարունակվեց նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումը «Առաջին ռադիո»-ի եթերով: Ներկայումս, Հանրային հաղորդման ռադիոներերում «Մոամբե»-ի նորությունների լրահավաքի առողջիության տարբերակը հաղորդվում է ազգային փոքրամասնությունների լեզուներով: Լրատվական թողարկումներին արխագերեն, օսերեն, աղբբեջաներեն, հայերեն և ոռւսերեն լեզուներով շաբաթական մեկ անգամ ավելանում է նաև ռադիոծրագիր վրաց լեզվով:

Թոք-շոու «Մեր բակը»

«Մեր բակը» թոք-շոուն 2013 թվականի հոկտեմբերի 1-ից փոխեց ձևաչափը և 2014 թվականին շաբաթական 4 անգամ որպես լիարժեք ֆիլմերի շարք ներկայացնում էր Վրաստանում բնակվող տարբեր ազգային, կրոնական խմբերը: Ստեղծագործական խումբը պատրաստեց նաև ֆիլմեր, որոնցում արտացոլված էին Վրաստանում բնակվող դուխորոնների, աղբբեջանցիների և այլ ազգային կամ կրոնական փոքրամասնությունների ավաղությունները և տոները: Պատրաստվեցին աշխարհում ճանաչված կինոռեժիսոր Սերգո Փարաջանովի, այլ առաջավոր ռչվրացական ճագում ունեցող հայտնի մարդկանց մասին հաղորդումներ: Տարվա ընթացքում եթերում հաղորդվեց «Մեր բակը» հաղորդաշարի 40 հաղորդում:

Հանրային հաղորդման կողմից փոքրամասնություններին հատկացված ժամանակ

| Հաղորդումների ձևաչափ | Անվանում | Տևողություն րոպե | Թվաքանակ , ամիս | Ընդամենը , ժամ |
|------------------------------|--|---------------------|--------------------|-------------------|
| Հեռուստատեսային լրատվական | Ազգային մոամբե | 55 | 11 | 262 |
| Ուղիո լրատվական | Ազգային մոամբե | 55 | 11 | 262 |
| Ուղիո լրատվական | Քրդական ամենշաբաթյա | 20 | 12 | 16 |
| Լրատվական-վերլուծական | «Իսկական ժամանակ» (Ազատություն- հանր.Հաղորդում) | 30 | 3 | 39 |
| Ընդամենը տարեկան, ժամ | | | | 579 |

Տպագիր մեղիս

«Ազգային փոքրամասնությունների մշակույթի խթանման ծրագրի» շրջանակներում, Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ, 2014 թվականին շարունակվեց ոչվրացալեզու մամուլի ֆինանսական աջակցությունը: Նախարարության աջակցությամբ իրատարակվեցին «Վրաստան» հայալեզու թերթի 12 համար, աղբբեշանալեզու «Գյուրջիստան» և ոռուսալեզու «Սվոբոդնայա Գրուգիա» և «Վեչերնի Տրիլիս» թերթերը: Նշված տպագիր մամուլը տարածվում է Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում:

IV. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն

Վրաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (ԿԸ), հաշվետու ժամանակաշրջանում, կրկին շարունակում է ակտիվ աշխատանքը ազգային

ქიოჭრამას ანიჭებულისა და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

ქიოჭრამას ანიჭებულისა და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

უთხოვდეთ ამ შესრულებულისა და სამოქალაქო ინტეგრაციის ეროვნული კონცეფციისა და 2014 წლის სამოქმედო გეგმის შესრულების ანგარიში

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկվածություն

- ԿԸՀ-ի համակարգման և կառավարման դեպարտամենտը 2014 թվականի տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինների ընտրությունների համար, կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ այն երիտասարդ ընտրողների համար, ովքեր առաջին անգամ էին մասնակցում ընտրություններին, Սամցիւե-Զավախեթի, Կախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանների 16 հանրային դպրոցում առաջին անգամ անցկացրեց տեղեկատվական բնույթի հանդիպումներ: Աշակերտներին հաղորդվեց տեղեկատվություն ընտրությունների պատմության, ընտրական վարչության, ընտրական ընթացակարգերի և տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին:
- Սամցիւե-Զավախեթի պետական համալսարանում և Ի.Գոգեբաշվիլու անվան Թելավի պետական համալսարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների հետ կայացավ Կարլ Պոպերի ձևաչափի բանավեճ «Ընտրությունների դերը ժողովրդավարական պետության զարգացման գործում» թեմայով:
- ԿԸՀ-ի պատվերով, Հանրային հաղորդումը 2014 թվականի մայիսի 15-ից սկսած հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանում և լուսաբանում էր «Ընտրական հեռուստատեսային դայթեստը», ինչպես նաև հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանեց ԿԸՀ-ի 10 վարկային/լրատվական տեսա-հոլովակը, որոնք տեղադրվեցին ինչպես Հանրային Հաղորդման, այնպես էլ Սամցիւե-Զավախեթի և Քվեմո-Քարթլիի տարածաշրջանային հեռուստատեսություններում:
- Հայալեզու և ադրբեջանալեզու լրագրերում, համապատասխանաբար «Վրաստան» և «Գյուրջիստան» թերթերում հրապարակվեց տեղեկատվություն քվեարկության օրը ընտրողների ձայն տալու ընթացակարգերի մասին:
- 2014 թվականի հունիսի 15-ի ինքնակառավարման ընտրությունների համար ԿԸՀ-ի պաշտոնական կայք-էջում (www.cesko.ge) տեղադրված «Ազգային փոքրամասնություններ» բանների վրա բեռնվեցին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանված ընտրական նյութերը: Դրա հետ միասին, կայք-էջում համընդհանուր ընտրացուցակում գոյություն ունեցող տվյալները հայերեն և

Աղքածանների կողմանը պատճենաբառությունը կազմվել է 2014 թվականի մայիս ամիսին և պահպանվել է մայիս 2018 թվականի մայիս ամիսը մասնաւոր գործությունների ժամանակաշրջանում:

- ԿԸՀ-ի կոնտակտ-կենտրոնի 12 օպերատոր, այդ թվում աղքային փոքրամասնությունների ներկայացուցիչ հայալեզու և աղքածանալեզու 4 օպերատոր, ապահովում էին ընտրության հարցերի կապակցությամբ ընտրողների և հետաքրքրվող անձանց իրազեկումը:
- ԿԸՀ-ի համակարգման և կառավարման դեպարտամենտը, աղքային փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական, քաղաքական և սոցիալական ինտեգրման ապահովման նպատակով, հանդիպումներ անցկացրեց Գարդարանի, Մարզներության և Ախալցիխի գյուղերում տեղական բնակչության հետ, որպեսզի նույնականացներ այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են աղքային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընտրություններին մասնակցությանը:
- ԿԸՀ-ի կազմակերպմամբ ժողովրդական պաշտպանին կից գործող աղքային փոքրամասնությունների խորհրդի անդամներին անցկացվեց ընտրական հարցերով վարժանք:

Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորված նախագծեր

ԿԸՀ-ին կից գործող Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնը դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորեց աղքային փոքրամասնությունների թեմայով աշխատող 10 ոչկառավարական կազմակերպության: Դրա հետ միասին, ԿԸՀ-ի հետ համագործակցությամբ, ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES) աղքային փոքրամասնությունների ներկայացուցիչներին իրազեկելու նպատակով ֆինանսավորեց 6 ոչկառավարական կազմակերպության: (Նախագծերի աշխարհագրական տեսադաշտ, Սամցիս-Զավախսեթի-Աղիզենի, Ախալցիխե, Ասպինձա, Բորժումի, Ախալքալաք, Նինոծմինդա, Քվեմո Քարթլի - Շալկա, Դմանիսի, Թեթրիծղարո, Բոլնիսի, Մարնեւուլի, Գարդարանի, Շիդա Քարթլի - Խաշուրի, Կասպի, Գորի, Քարելի, Կախեթի - Ախմետա, Թելավի, Ղվարելի, Լազունի, Սագարեզո, Միղնախի, Դեղովիլիսծղարո, Գուրջաանի):

Ազգային փոքրամասնությունների լեզուներով ընտրական փաստաթղթերի թարգմանություն

- Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների 12 ընտրական տարածքներում ստեղծվեց 340 ընտրական տեղամաս: Պատրաստվեց և տպագրվեց երկլեզու՝ վրացերեն-ադրբեջաներեն ընտրական քվեաթերթիկ 9 ընտրատարածքի 203 տեղամասի համար (համամասնական՝ 176 900, մեծամասնական՝ 176 900, գամգերելի՝ 176 900), 7 ընտրատարածքի 133 տեղամասի համար (համամասնական՝ 69 600, մեծամասնական՝ 69 600, գամգերելի՝ 69 600), ինչպես նաև Մառնեռլի ընտրատարածքի չորս տեղամասի համար տպագրվեց եռալեզու՝ վրացերեն-ադրբեջաներեն-հայերեն ընտրական քվեաթերթիկներ (համամասնական 3 000, մեծամասնական 3 000, գամգերելի՝ 3 000): Բացի ընտրական քվեաթերթիկներից, թարգմանվեց և տպագրվեց. Համընդհանուր ընտրացուցակը, քվեարկության շենքը և ընթացակարգերն արտացոլող պաստառներ, ընտրողների ֆլայերներ և քվեաթերթիկը լրացնելու կարգը վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի 1 522 հայ և 898 ադրբեջանցի անդամի համար թարգմանվեց և վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով տպագրվեց. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց-հրահանգը, հանձնաժողովի նախագահի հրահանգը, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները, ընտրական տեղամասային հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները քվեարկության օրը, ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները, ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթները և փոխադրական ընտրական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների «Քվեարկության օրվա ընթացակարգերը» ուսումնական ֆիլմը մատչելի էր ենթագրերով (սուբտիտրերով): Հանձնաժողովի անդամներին վարժանքներ անցկացվեցին նրանց հասկանալի լեզվով:

Ընտրական փաստաթղթերը թարգմանվեցին Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) ֆինանսական աջակցությամբ և ԿԸՀ-ի հետ համագործակցությամբ:

V. Սոցիալական և տարածաշրջանային ինստեգրում

Աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարությունը, հաշվետու ժամանակաշրջանում, պլանավորեց և իրականացրեց ազգային փոքրամասնությունների տեղեկատվական քարոզարշավ առողջապահության և սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի մասին. զյուղի բժշկի ծրագիր, C հեպատիտի ծրագիր, մոր և մանկան առողջություն, հասարակական առողջապահություն, շտապ բուժօգնություն, սոցիալական պաշտպանություն:

Տեղեկատվական քարոզարշավ

2014 թվականին իրականացված պետական ծրագրերից սահմանվեցին առաջնային ուղղությունները և ոչվրացալեզու բնակչության իրազեկվածության մատչելիության նպատակով մշակվեցին համապատասխան նախագծեր: Պատրաստվեցին և տպագրվեցին տեղեկատվական բյուլետեններ և պաստառներ տարբեր թեմաներով. Դեղատումսի ինստիտուտի վերականգնման հետ կապված նորությունների մասին մշակվեցին և տարածվեցին բուկլետներ վրացերեն, ադրբեզաներեն և հայերեն լեզուներով (վրացերեն՝ 300 000, հայերեն՝ 5 000, ադրբեզաներեն՝ 5 000 հատ):

Կենդանիների սուր ինֆեկցիոն հիվանդության՝ սիբիրյան խոցի և բրուցելյոզի կանխման հարցերով մշակվեցին տեղեկատվական բուկլետներ. «Ի՞նչ պետք է գիտենանք սիբիրյան խոցի մասին» (վրացերեն՝ 9 000, ադրբեզաներեն՝ 7 000, հայերեն՝ 4 000 հատ) «Ի՞նչ պետք է գիտենանք բրուցելյոզի մասին» (վրացերեն՝ 10 000, ադրբեզաներեն՝ 15 000 և հայերեն՝ 500 հատ): Նշված նյութերը բաժանվեցին Վրաստանի ադրբեզանցի և հայ քաղաքացիներով հոծ բնակչության տարածաշրջանների բժշկական հիմնարկություններում և բնակչության շրջանում: Անցկացվեցին նաև տեղեկատվական հանդիպումներ թիրախային խմբերի հետ: Թարգմանված նյութերը բուկլետների վրացալեզու տարբերակի հետ միասին տեղադրվեցին Վրաստանի Աշխատանքի, Առողջության և Սոցիալական պաշտպանության նախարարության կայք-էջում (www.moh.gov.ge), իսկ տպագիր նյութերը փակցվեցին նախարարության քաղաքացիական ընդունարաններում:

2014 թվականին ավարտվեց 82 նոր ամբուլատորիայի շինարարության և սարքավորման ծրագիրը Վրաստանի տարբեր տարածաշրջաններում, այդ թվում Քվեմո Քարթլիում 6 ամբուլատորիա (Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Թեթրիձղարո, Ծալկա, Գարդաբանի) և Սամցխե-Զավախսեթիում 6 ամբուլատորիա (Ախაլցիխե, Արთვանի, Նինոծմինդա), ընդամենը 12 նոր ամբուլատորիա ադրբեզանցի և հայ բնակչությամբ բնակչությամբ շրջաններում:

Ենթակառույցի վերականգնում

Հաշվետու ժամանակաշրջանում, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարությունը կատարեց հետևյալ աշխատանքները.

- Մշակվեցին ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների զարգացման ռազմավարությունների գործնական պլաններ,
- Մշակվեցին ենթակառույցի վերականգնման ներդրումային նախագծեր և աջակցություն ցուցաբերվեց դրանց իրականացմանը,
- Շարունակվեց գյուղի աջակցության ծրագիրը և դրա իրականացման մոնիթորինգը,
- Շարունակվեց միջսահմանային համագործակցության զարգացման աջակցությունը:

Իրականացված նախագծեր (տարածաշրջանային զարգացման հիմնադրամ).

- Քվեմո Քարթի - 14 789 000 լարիի արժողությամբ 81 ներդրումային նախագիծ,
- Սամցիս-Զավախեթի – 12 657 987 լարիի արժողությամբ 34 նախագիծ,
- Կախեթի (Լազողեխի և Ախմետայի մունիցիպալիտետներ) – 4 379 000 լարիի արժողությամբ 13 նախագիծ:

Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի տվյալներով, իրականացվեցին ճանապարհների շինարարության հետևյալ նախագծերը.

- Քվեմո Քարթի – 17 936 000 լարիի արժողությամբ 10 նախագիծ,
- Սամցիս-Զավախեթի – 12 736 300 լարիի արժողությամբ 4 նախագիծ,
- Կախեթի (Ախմետա, Լազողեխի) – 5 016 000 լարիի արժողությամբ 4 նախագիծ::

Զրամատակարարման ընկերության նախագծերի թվաքանակը և արժողությունը կազմեց.

- Սամցիս-Զավախեթի – 10 730 737 լարիի արժողությամբ 2 նախագիծ,
- Քվեմո Քարթի - 3 290 451 լարիի արժողությամբ 3 նախագիծ:

2014 թվականին երկրի մասշտաբով շարունակվեց գյուղի աջակցության ծրագրի իրականացումը: Ծրագրի բյուջետային ֆինանսավորումը, ինչը կազմում էր 50 մլն լարի, ծախսվեց գյուղում առաջնահերթային սոցիալ-տնտեսական կարիքների աշխատանքների

վրա, մասնավորապես, տեղական ենթակառության օբյեկտների, դրանց բարեկարգման և նաև զյուղատնտեսական ոլորտի վրա: Կոնկրետ զյուղի նկատմամբ, գումարի կիրառման նպատակայնությունը որոշվեց զյուղական ժողովի, հանրային քննարկումների և հարցումների հիման վրա: Ծրագիրը նախատեսում էր բնակչության ակտիվ ընդգրկվածություն:

Մանր ֆերմերային տնտեսությունների և ասոցիացիաների ստեղծման և զարգացման նպատակով, հաշվետու ժամանակաշրջանում, տարածաշրջանային զարգացման գործակալությունները ինտենսիվ կերպով կազմակերպում կին թեմատիկ հանդիպումներ, վարժանքներ և սեմինարներ տեղական, այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ձեռներեցների համար:

VI. Մշակույթի և ինքնազոյի պահպանում

Հաշվետու ժամանակաշրջանը աչքի էր ընկնում մշակույթի աջակցության նպատակով անցկացրած բազմազան միջոցառումներով, որոնք ծառայում էին ազգային փոքրամասնությունների ինքնազոյի պահպանությանը, նրանց մշակութային ժառանգության պաշտպանությանը և զարգացմանը: Կազմակերպվեցին փառատոններ, մրցույթներ, ցուցահանդեսներ, հիշատակի երեկոներ, միջմշակութային երկխոսության ձևաչափով հանդիպումներ, գրական-ձանաշողական շնորհանդեսներ և այլն:

Վրաստանի ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանության-զարգացման, ժողովրդականացման, վրաց մշակութային տարածությունում ինտեգրման տեսակետից Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը «Ազգային փոքրամասնություններին աջակցություն» ծրագրի շրջանակներում 2014 թվականին աջակցություն ցուցաբերեց մի շարք նախագծերի.

- Վրացի և հրեա ժողովուրդների միջև 26 դարյա բարեկամությունը նշելու համար անցկացվեցին ամբողջ շարք կառավարական միջոցառումներ, այդ թվում.

ՀԻԲԱ Շոթա Ռուսթավելու անվան պրոֆեսիոնալ պետական թատրոնում անցկացվեց վրաց-հրեական 26-դարյա բարեկամությանը նվիրված տոնական համերգ, բացվեց Գ.Քաազովի անվան հրեական ազգագրական-պատմական թանգարան, ինչպես նաև կազմակերպվեց Վրաստանում հրեա ժողովրդի կենցաղը-կյանքը արտացոլող ցուցանմուշների ցուցահանդես, Էլեկտրոնային ձևաչափով պատրաստվեց «26 դար» նախագիծը, որը արտացոլում էր վրացի և հրեա ժողովուրդների միջև պատմա-մշակութային փոխհարաբերությունների բոլոր արժանահիշատակ երևույթները,

- Միաժամանակ Ախունդովի անվան մշակութային կենտրոնում իրականացվեց «Աղքաղաղանական ձեռագործ գորգեր» նախագիծը,
- Վրացերեն և օսերեն լեզուներով հրատարակվեց օս դասական գրող Նաֆի Զուսիթի երկիրությունների ժողովածուն «Լեռներն իմ օրորոցը» վերնագրով,
- Աղքաղաղաներեն հրատարակվեց «Հարյուր մեծ վրացի» գիրքը, որտեղ ներկայացված են պատմական նշանակություն ունեցող հարյուր հայտնի վրացու կյանքի և գործունեության մասին պատմություններ,
- Աջակցություն է ցուցաբերվել միջազգային երաժշտական «Թուրքվիզիոն» մրցույթի նախապատրաստական փուլին,
- Տպագրության է պատրաստվել «Վեյնախուրի արվեստ» կատալոգը, որտեղ հավաքված են Վեյնախուրյան մշակույթի ավանդությունները և կիրառական արվեստի տարբեր նմուշներ,
- «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ հրատարակության է պատրաստվել երկու ալբոմ «Վրաստանի հայ նկարիչները 20-րդ դարի II կեսին» և «Հին Թրիլիսիի պատկերազարդումները» վերնագրով,
- Մուլտիթենիկական «Մեկ երկնքի տակ» փառատոնի շրջանակներում կայացան դասական երաժշտության և ազգագրական համերգներ,
- Կովկասյան ջազ-փառատոնի շրջանակներում, որին մասնակցում էին 4 երկրներից ժամանած շուրջ 30 երաժիշտներ, կայացավ 4 համերգ:

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կողմից իրականացված միջոցառումներ

Հաշվետու ժամանակաշրջանում, Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը ակտիվորեն համագործակցում էր Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի քաղաքացիական ինստեգրման վարչության, ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր հանդուժողականության կենտրոնի, Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքների հետ:

Գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, 2014 թվականին ազգային Գրադարանում անցկացվեց 21 միջոցառում, այդ թվում գեղանկարչական և լուսանկարչական ցուցահանդեսներ, համերգներ, գրքերի շնորհանդեսներ: Միջոցառումներին բազմիցս ցուցադրվեցին ազգային փոքրամասնությունների մասին ազգային գրադարանի ֆոնդերում պահպան հազվագյուտ նյութերը: Անցկացված միջոցառումներից հատկանշական են «Վրաց-չերքեզական երկխոսությունը», Սերգո Փարաջանովի ֆիլմի ցուցադրությունը, ինքուշ ազգի արտաքսման 70-ամյակին նվիրված միջոցառումը, չեչենների և ինքուշների հիշատակի

Երեկոն, Արիել Շարոնի հիշատակի երեկոն, Քեթևան Դավիթի գրքերի թարգմանությունների շնորհանդեսը, Ֆրունզիկ Մկրտչյանի երեկոն, Յան Համերի ստեղծագործությանը նվիրված համերգը և այլն:

Վրաստանի սպորտի և երիտասարդության գործերով նախարարության իրականացրած միջոցառումները

Հաշվետու ժամանակաշրջանում, նախարարությունը իրականացրեց ամբողջ շաբթ ծրագրեր և նախագծեր.

- Սամցիսէ-Զավախսէթի, Քվեմո Քարթիի և Կախէթի տարածաշրջանների ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ 540 երիտասարդ մասնակցեց Թբիլիսիում անցկացված միջազգային մարզական մրցաշարերին ջրագնդակից, ուազիից և ձյուդոյից;
- Ախալցիխեում անցկացվեց Մեսխեթի միջազգային երիտասարդական ֆուտբոլային փառատոն-2014, որին Վրաստանի տարբեր տարածաշրջանների 14 թիմերում մասնակցեց 400 երիտասարդ, փառատոնին հրավիրված էին նաև երկու թիմեր Հայաստանից և Ադրբեյջանից;
- Ծալկայում անցկացվեց «Կախարդական ֆլեյտա» փառատոնը, որի շրջանակներում կազմակերպվում էին երիտասարդ ֆլեյտիստների ամենօրյա վարպետության դասեր և փորձեր,
- Վրաց և օս երիտասարդների համար կազմակերպվեց ուսումնա-ձանաչողական «Երիտասարդ խաղաղարար էքսպրես» շրջագայությունը, որի շրջանակներում շուրջ 20 մասնակից այցելեց 5 երկիր (Թուրքիա, Հունաստան, Մակեդոնիա, Սերբիա, Կոսովո) և ծանոթացավ եվրոպացի երիտասարդների համալսարանական կյանքին,
- Անցկացվեց **միջանհատական ունակությունների և հաղորդակցությունների կառավարման վարժանք**, որին մասնակցեցին շուրջ 50 հայ, ադրբեյջանցի, քուրդ, քիստ, ռուս և չեչեն երիտասարդներ: Ինչպես նաև Ղվարելի արդարադատության ուսումնական կենտրոնում շուրջ 50 երիտասարդ մասնակցեց նախագծի կառավարման և մենեջմենտի վարժանքին, «Երիտասարդները պատնեշներից դուրս» նախագծի շրջանակներում անձնական զարգացման վարժանքներ և սեմինարներ անցկացվեցին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ 120 երիտասարդների համար:
- Վրաստանի եվրոինտեգրման գործնթացի իրազեկման նպատակով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար իրականացվեց

ծրագիր «*Միասին եվրոպական քնտրության համար*», որի շրջանակներում տեղեկատվական հանդիպումներ և սեմինար-բանավեճեր անցկացվեցին Ախալքալաքի, Ախալցիխեի, Նինոծմինդայի, Աղիզենի, Ասպինձայի և Բորչոմի մունիցիպալիտետներում: Ծրագրում ընդգրկվեցին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ շուրջ 500 երիտասարդներ:

VII. Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի իրականացրած գործունեություն

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմը ակտիվորեն ընդգրկված էր Հաշտեցման և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2014 թվականի Գործնական պլանի իրականացման գործընթացում: Հաշվետու ժամանակաշրջանում, պետական նախարարի աշխատակազմը դեկավարում էր միջզերատեսչական հանձնաժողովի աշխատանքը, մասնավորապես, անցկացրեց հանձնաժողովի ընդլայնված նիստեր, ինչպես նաև թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումներ կրթության և պետական լեզվի, մեղիայի և տեղեկատվության մատչելիության ուղղություններով, մշակեց առաջարկություններ և հանձնարարականներ: Թեմատիկ աշխատանքային խմբերի ձևաչափով գործունեությունը այն բանի հնարավորություն է ընձեռում, որ տարբեր հարցերի քննարկմանը ընդգրկվեն ոչկառավարական կազմակերպությունները, փորձագետներ և բոլոր այն ակտորը, ով աշխատում է նշված հարցերի վրա: Պետական նախարարի աշխատակազմը, միջզերատեսչական հանձնաժողովի հետ միասին, պատրաստեց և ներկայացրեց 2013 թվականի Գործնական պլանի գեկույցը և 2014 թվականի Գործնական պլանը:

Պետական նախարարի աշխատակազմը, անկախ փորձագետների խմբի հետ միասին, պատրաստեց նաև Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների Գործնական պլանի կատարման գնահատման փաստաթուղթը: Նոր ուղղականացման և Գործնական պլանի մեջ արտացոլվեց բոլոր այն դրական արդյունքը, ինչը բացահայտվեց գնահատման գործընթացում, ի նկատի կառնվեն խախտումները և թերությունները: Գնահատման փաստաթուղթը ներկայացվեց միջզերատեսչական հանձնաժողովին, ազգային փոքրամասնությունների խորհրդին, փորձագետներին, միջզերատեսչական կազմակերպություններին և դիվանագիտական կորպուսին: Փաստաթուղթի շուրջ քննարկում տեղի ունեցավ նաև տարածաշրջաններում (Ախալքալաքի, Մարնելուի, Դմանիսի) ոչկառավարական կազմակերպությունների, համայնքի առաջնորդների,

ինքնակառավարման ներկայացուցիչների և բնակչության մասնակցությամբ: Գնահատման փաստաթուղթը թարգմանվեց անգլերեն և ոռուերեն լեզուներով, էլեկտրոնային տարբերակը տեղադրվեց պետական նախարարի աշխատակազմի կայք-էջում, փաստաթուղթի կապակցությամբ պատրաստվեց նաև հրապարակում:

Կրթության ուղղությամբ, հաշվետու ժամանակաշրջանում, մի շարք հանդիպումներ կայացան Քվեմո Քարթիում բնակվող երիտասարդության հետ, որի ժամանակ նրանք տեղեկատվություն ստացան «4+1» ծրագրի մասին: Աշխատանքային հանդիպումներ կայացան նաև Մարնեուլիում, Դմանիսում, Գարդարանում, Ախալքալաքում և Թբիլիսիում ոչվրացալեզու դպրոցների և վրաց լեզվի տների մանավարժ-ուսուցիչների, աշակերտների, նրանց ծնողների և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

2014 թվականի հունիսին պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, քննությունների ազգային կենտրոնի հետ միասին Մարնեուլիում անցկացվեց դիմորդների նախաթեստավորում, որին մասնակցեց Քվեմո Քարթիում բնակվող 250 երիտասարդ:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների, որոնք ներկայացնում էին հայեցակարգի ռազմավարության բոլոր ուղղություններով որևէ հիմնական թիրախային խումբ, առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց հաշվետու ժամանակաշրջանում:

- Երիտասարդները ակտիվորեն մասնակցում էին տարբեր տեսակի մշակութածանաչողական միջոցառումներին և էքսկուրսիաներին: 2014 թվականին շուրջ 50 աղբբեջանցի ուսանող այցելեց Կախեթի պատմական հուշարձանները, Քվեմո Քարթիի շուրջ 20 աշակերտ հյուրընկալվեց Վրաստանի ազգային թանգարանում, Պանկիսի կիրճի աշակերտները այցելեցին Թբիլիսիի ազգագրական թանգարան, նշված ժամանակաշրջանում գրական-պատմական-ձանաչողական միջոցառումներ անցկացվեցին նաև Ղարաջալար գյուղի և Դուիսի հանրային դպրոցներում,
- Երիտասարդության շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացնում տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների հետ տեղեկատվական հանդիպումները: Նրանց տրվում է հնարավորություն ծանոթանալու տարբեր իշխանական կառուցվածքների գործունեությանը, անմիջականորեն որոշում ընդունող դեմքերից լսելու նրանց տեսակետը հրատապ հարցերի մասին և ծանոթացնելու նաև իրենց կարծիքներին: Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, 2013-14 թվականներին Քվեմո Քարթիից և Սամցին-Զավախեթից երիտասարդները գտնվում էին Սպորտի և երիտասարդության գործերով նախարարությունում, ուսուցիչների

մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի ուսուցիչների տանը, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Պետական նախարարի աշխատակազմում, ՆԳՆ ակադեմիայում,

- Հաշվետու ժամանակաշրջանում, Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և մասնակցությամբ դասախոսություն-սեմինարներ կազմակերպվեցին Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար Թրիլիսիում և տարածաշրջաններում: Դասախոսություն-սեմինարներ և բանավեճեր կայացան Սամցին-Զավախեթի պետական ուսումնական համալսարանում, Ախալցիի համալսարանում, Թրիլիսիի Իվ. Զավախիշվիլու անվան պետական համալսարանում: Դասախոսությունների թեման բազմազանությունը և հանդուժողականությունն էր, ազգային փոքրամասնությունների իրավունքները Վրաստանում, պետական քաղաքականությունը քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ և այլն:
- Եվրամիության և Վրաստանի միջև ասոցացման մասին համաձայնություն: Պետական նախարարի եվրոպական և եվրո-ատլանտյան կառուցվածքներին ինտեգրման հարցերով աշխատակազմը, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի հետ միասին Վրաստանի եվրախնտեցման մասին տեղեկատվական քարոզարշավ է իրականացնում ազգային փոքրամասնությունների համար: 2014 թվականի ընթացքում պատրաստվեցին և տարածվեցին տեղեկատվական նյութեր ազգային փոքրամասնությունների լեզուներով (հայերեն, աղբեցաներեն, արխագերեն, օսերեն): Թրիլիսիի Իվ. Զավախիշվիլու անվան պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում ոչվրացալեզու ուսանողների հետ: Նրանց հաղորդվեց տեղեկատվություն Վրաստանի եվրախնտեցման գործնթացի մասին: Պետական նախարարի աշխատակազմը «4+1» ծրագրի շահառու ուսանողների համար հայտարարեց Էսեների մրցույթ «Եվրոխնտեցումը և ես» թեմայով: Մրցույթը նախատեսում էր երիտասարդների կարծիքների և մոտեցումների դրսերում Վրաստանի եվրոպական ընտրության նկատմամբ: Մրցույթին հանձնաժողովը բացահայտեց երեք լավագույն աշխատանքի հեղինակի: Հաղթողները պարզեցին, իսկ լավագույն հոդվածները տպագրվեցին «Վրաստան» և «Գուրջիստան» թերթերում:

Վրաստանի եվրոխնտեցման մասին տեղեկատվական հանդիպումներ տեղի ունեցան նաև Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցին-Զավախեթի մեղիայի ներկայացուցիչների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի Պետական նախարարի աշխատակազմի աշխատակիցները գործուղմամբ գտնվում էին Կախեթի տարածաշրջանի Պանկիսի կիրճում և

Դեղովար մունիցիպալիտետի ժողովի գործությունը կատարվել է 2014 թվականի մայիս ամիսին և պահպան առաջին ամսաթիվ գործությունը առաջին ամսաթիվ գործությունը:

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամները մասնակցություն ունեցան նաև միջազգային միջոցառումներին, որոնց նպատակը տարբեր երկրների փորձի փոխանակումն է: 2014 թվականի սեպտեմբերին Եվրամիության TAIEX- ծրագրի աջակցությամբ փոխանակման այց իրականացվեց Հարավային Տիրոլում: Այցի շրջանակներում, փոխանակվեց և կիսվեց փորձը կրթության, պետական լեզվի ուսուցման և նաև ազգային փոքրամասնությունների մասին տեղեկատվության մատչելիության տեսանկյունից:

Հատկանշական է Պետական նախարարի աշխատակազմի և պետական միջգերատեսչական հանձնաժողովի արդյունավետ համագործակցությունը և հաճախակի թեմատիկ հանդիպումները Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ: Հաշվետու ժամանակաշրջանում, պետական նախարարի աշխատակազմը նույնպես սերտորեն համագործակցում էր քաղաքացիական սեկտորի, միջազգային կազմակերպությունների, երկրում լիազորագրված դիվանագիտական կորպուսի, տեղական և միջազգային փորձագետների հետ:

Գործնական պլանի իմպլեմենտացիայի գործընթացում, պետական նախարարի աշխատակազմը մշտական հաղորդակցություն ուներ տարածաշրջանների տեղական բնակչության, ինքնակառավարումների և ոչկառավարական կազմակերպությունների հետ, կանոնավոր կերպով ստանում էր տեղեկատվություն քաղաքացիներից, արձագանքում էր աշխատակազմում ստացված առաջարկություններին և ուղղություններին:

Պետական նախարարի ներկայացուցիչը Քվեմո Քարթիում համակարգում էր աշխատակազմի աշխատանքը տարածաշրջանում:

Հաշվետու տարվա ընթացքում, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը Վրաստանում բնակվող ազգային և կրոնական փոքրամասնություններին՝ ինչպես բնակչությանը, այնպես էլ դիվանագիտական կորպուսին պարբերաբար շնորհավորում էր նրանց ազգային և կրոնական տոնների կապակցությամբ: